

1522

1523

83

U-87

2011

2003



Հրատարակութիւն Գիտութեան քահ. Աղանձանցի № 6.

Ե. ՍՊԻՐԻ

## ԱՅԾԱՐԱԾ ՄՕՆԻ

Գերմաներէնից թարգմ.  
Իսահակ Յարութիւնեանց.



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան Մ. Շարաձէի, Նիկ., 21.

Типогр. М. Шарадзе, Ник., 21.

1895



Ա.

Աշխատութիւնները.

- 1. Աղօթատետր, բ. տպագրութիւն 1889 . — 10
- 2. Կրօնի դասագիրք ա. տ. 1889 (տպառուած) — 15
- 3. Կրօնի դասագիրք բ. տ. Գ. տպագրութիւն 1891 . . . . . — 25
- 4. Կրօնի դասագիրք գ. տ. Գ. տպագրութիւն 1890 . . . . . — 25
- 5. Տոմար և տօնացոյց Հայաստանեայց ս. եկեղեցւոյ բ. տպագրութիւն 1894 . . . — 50
- 6. Պատի հատուածական օրացոյց ժամանակագրութեամբ, է. տարի 1895 . . . — 60
- 7. Ծոցի օրացոյց . . . . . — 15
- 8. Կարնոյ գաղթը պատմական տեսութիւն 1891 . . . . . — 10
- 9. Գիւան Հայոց պատմութեան գիրք Ա.—Բ. 1780—1834 Սահակ Մեսրոպեան մրցանակին արժանացած 1893 . . . . . 2 —
- 10. Գիւան Հայոց պատմութեան գիրք Գ. Սիմեոն կաթողիկոսի յիշատակարանը, կենսագրութ., յաւելուածներով և ծանօթութիւններով 1894 . . . . . 7 —
- 11. Կարգ Ատուածապաշտութեան Հայաստանեայց ս. եկեղեցւոյ 1895 . . . . . — 40

Բ.

Թարգմանութիւնները.

- 12. Հաւատարմութիւնն ամեն արգելքների յաղթում է. Ք. Հոֆմանի. 1877 . . . . . — 40
- 13. Խաւարից դէպի լոյս. Ք. Հոֆմանի, 1877 — 40
- 14. Դօն ֆիլոսոֆիանշեցի Մ. Սերվանտեսի 1878 (տպառուած). . . . . — 70
- 15. Գեորգ Ռոյլէստոն, վէպ 1879 . . . . . — 60
- 16. Երբորդ սոկի, առակ Լակիդէի (պարզատրուած Ս. Պ. Ֆրեդրէկեան ընկ. կողմից) բ. տպ. 1893 . . . . . — 10


Հրատարակութիւն Գիւտ քահ. Աղանեանցի № 6.

83  
u-87 Այ Ե. Ս Պ Ի Ի Ի

ԱՅԾԱՐԱԾ ՄՕՆԻ

Գերմաներէնից թարգմ.

Ի սահակ Յարութիւնեանց.



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան Մ. Շարաձէի, Նիկ., 21.  
Типогр. М. Шарадзе, Ник., 21.  
1895



Дозволено цензурою, Тифлисъ, 13 Марта,  
1895 г.

2066. 17  
28

## ԳԼՈՒԽ Ա.

Ա Ն Հ Ո Գ Մ Օ Ն Ի Ն:



Շուէցարիայի Ֆիդերիս ջերմուկը հասնելու համար՝ պէտք է անցնել Պրէտիգաուի երկար հովիտը, թողնել կառուղին և բարձրանալ գառիվեր բլուրը: Բարձրանալիս ձիերն այնպէս յոգնում և հեռւմ են, որ ուղևորներն աւելի լաւ են համարում իջնել և ոտով բարձրանալ կանաչապատ բլուրը:

Բաւական երկար ժամանակ բարձրանալուց յետոյ՝ ուղևորը հասնում է Ֆիդերիս գիւղը, որ տարածուած է գեղածիժաղ ու կանա-



չազարդ բարձրութեան վրայ. այդտեղից կըրկին շարունակելով ճանապարհը լեռների միջով վերջապէս երևում է ամեն կողմից ժայռերով շրջապատուած ու մենակ մնացած ջերմուկի շինութիւնը: Այդ բարձրութեան վրայ միայն եղևնու ծառեր են բուսնում ու քարաժայռերը ծածկում. ամեն կողմից երևում են կանաչ խոտի մէջ բուսած գոյնզգոյն լեռնային ծաղիկներ:

Մի ամարային պայծառ երեկոյ ջերմկատնից դուրս եկան երկու կին և բարձրացան այն նեղ շաւղով, որ ջերմկատան մօտից սկսուելով՝ բաւականին մեծ զառիվերով հասնում է ժայռերի գագաթին: Հասնելով սուաջին դարաւանդին, նրանք կանգնեցին և նայեցին իրենց շուրջը, որովհետև նոր էին այս ջերմուկն եկել:

«Այստեղ, վերևը, զուարճալի տեղ չէ՝ մօրաքոյր», ասաց նրանցից երիտասարդն՝ աչքերը դէս ու դէն ձգելով. «միայն ժայռեր ու եղևնու անտառներ են և յետոյ կրկին լեռներ ու անտառներ վրան: Եթէ մենք վեց շաբաթ այստեղ պէտք է մնանք, ես կ'ուզենայի երբեմն երբեմն էլ զուարճալի բաներ տեսնել»:

«Զուարճալի չի լինի, Պաուլա, եթէ այս-

տեղ կորցնես քո շողակնեայ խաչը», պատասխանեց մօրաքոյրը՝ կապելով այն կարմիր թաւշեայ ժապաւէնը, որից կախուած էր փալփալ խաչը: «Մեր գալուց յետոյ այս արդէն երրորդ անգամն է, որ ես ամրացնում եմ ժապաւէնդ. չգիտեմ ինչն է պատճառը՝ դ՞ուրս է ժապաւէնը, բայց այնքանը գիտեմ, որ կորցնելուց յետոյ կողբաս»:

«Ա՛յ, ոչ, աղաղակեց Պաուլան աշխուժութեամբ. խաչը չեմ կորցնի, ո՛չ մի կերպ. մեծ մայրիկի տուածն է և իմ ամենաթանկագին գանձը»:

Պաուլան ինքը ձեռքն առաւ ժապաւէնը և երկու երեք անգամ միմեանց վրայ կապեց, որ ամուր կենայ: Յանկարծ նա ականջները սրեց. «Լսիր, լսիր մօրաքոյրս, այժմ ճիշտ որ մի զուարճալի ձայն է գալիս»:

Բարձր լեռների վրայից հնչում էր մի ուրախ երգ. երբեմն երբեմն լսում էր երկար ու արձագանք տուող լէյլէյն ու յետոյ կրկին երգ: Երկուսն էլ վերև նայեցին, բայց ոչինչ չկարողացան տեսնել: Շաւղի շարունակութիւնը ծուռն ու մուռ էր՝ երբեմն բարձրը թփերի և երբեմն էլ դարաւանդների միջով, այնպէս որ ներքևից միմիայն նրա փոքրիկ մասը կարելի էր տեսնել: Այժմ յանկարծ



շաւիղը կենդանութիւն ստացաւ և աւելի մօտիկից եկաւ երգի ձայնը:

«Տես, տես, մօրաքոյր, այստեղ, այստեղ, տես, տես», աղաղակեց Պաուլան մեծ հրճուանքով և մինչև որ մօրաքոյրն իր շուրջը կընայէր, մօտեցան երեք, չորս այծեր թռչկոտալով և հեազհետէ շատացան. նրանցից իւրաքանչիւրը մի զանգակ ունէր վզից կախած. զանգակներն ամեն կողմից հնչում էին. այծերի խմբի միջից թռչկոտալով դուրս եկաւ այծարածը և վերջացրեց իր երգը.

Ձմեռն էլ ուրախ եմ ես,

Որովհետև լացը ոչինչ չի օգնի.

Եւ որովհետև ամեն անգամ

Գարունը հետևում է ձմրան»:

Յետոյ նա բարձրաձայն լէլլէլովյանկարձ իր խմբով կանգնեց երկու կանանց առաջը. ինքն էլ իր բոբիկ ոտերով այնպէս արագ ու անձայն էր թռչկոտում, ինչպէս իր այծերը:

«Բարի երեկոյ ձեզ», ասաց նա, երկուսին էլ զուարթ նայելով և ուզում էր շարունակել իր ճանապարհը:

Այծարած տղան իր զուարթ աչքերով շատ դուր եկաւ երկու կանանցը: «Մի փոքր սպասիր», ասաց Պաուլան, «դու Ֆիզերիսի

այծարածն ես, գիւղի այծերն ես արածացնում»:

«Այո՛, ի հարկէ» պատասխանեց տղան:

«Ամեն օր դրանց հետ վերեւ ես գնում»:

«Ի հարկէ»:

«Հա՛, հա՛, անունդ ինչ է»:

«Իմ անունը Մօնի է»: —

«Արդեօք մեզ համար մի անգամ էլ կ'երգես այն երգը, որ վերևն երգում էիր և որի վերջին տունը միայն լսեցինք մենք»:

«Այդ շատ երկար կտևի և այծերս կուշանան. նրանց պէտք է տուն տանեմ»: Նա ուղղեց իր մաշուած գլխարկը, մտրակն օդի մէջ ճօճեց և կանչեց այծերին, որոնք արդէն ամեն տեղ սկսել էին արածել «տո՛ւն, տո՛ւն»:

«Ուրեմն ուրիշ անգամ կ'երգես ինձ համար, այնպէս չէ՛ Մօնի» աղաղակեց նրա ետևից Պաուլան:

«Այո՛, կ'երգեմ, բարի գիշեր», պատասխանեց այծարածը, այծերի հետ միասին արագ ցած վազեց և կարճ ժամանակից լետոյ ամբողջ հօտը հանգիստ կանգնած էր ջերմկատան մօտ, որովհետև այդ տան տիրոջն էին պատկանում Մօնիի պահած այծերից երկուսը՝ որոնցից մէկը սպիտակ ու գեղեցիկ էր, իսկ միւսը սև և ուլով: Մօնին շատ էր սիրում փոքրիկ



և քնքոյշ ուլին և խնամուժ էր նրան, ուլն էլ այնպէս մտերմացել էր նրա հետ, որ ամբողջ օրը նրա ետեւիցն էր վազում: Այժմ էլ Մօնին վերցրեց նրան փաղաքշելով, տարաւ ախոռը և ասաց. «Մէգէրլի, այժմ քնիր, դու յոգնած ես. մինչև սարի կատարը բաւականին հեռու է, իսկ դու դեռ ևս փոքր ես, իսկոյն պառկիր խոտի վրայ ու քնիր»: Մէգէրլին այսպէս տեղաւորելով նա իր հօտի հետ առաջ գնաց, բարձրացաւ ջերմկատան առաջն եղած բլուրը և լետոյ իջնելով փողոց՝ դիմեց դէպի գիւղը: Գիւղ հասնելով՝ ձեռքն առաւ իր փոքրիկ փողը և այնպէս ուժով փչեց, որ նրա ձայնը թնդալով հասաւ մինչև հեռու հովիտը: Այս ու այն կողմը ցրուած տներից վազելով դուրս եկան երեխաները և հեռուից ճանաչելով իրանց այծերը՝ վրայ էին վազում ու բռնում. մօտիկ տներից դուրս եկան կանայք և պարանով կամ եղջիւրներից բռնած քաշ տուին այծերին դէպի տուն, այնպէս որ կարճ ժամանակից լետոյ ամբողջ հօտը ցրուեց և բոլոր այծերը տեղաւորուեցան: Վերջը Մօնին մենակ մնաց իր սեպհական թխահեր այծի հետ և դիմեց դէպի իրենց տուն, ուր արդէն դռան առաջը կանգնած՝ սպասում էր նրա մեծ մայրը:

«Ամեն բան լաւ անցաւ, Մօնի» հարցրեց տատը զուարթ կերպով, թխահերին տարաւ ախոռը և իսկոյն սկսեց կթել: Տատը դեռ ևս առոյգ կին էր և ինքն էր շինում թէ տանու և թէ ախոռի բանը՝ ամեն տեղ կարգ ու կանոն պահպանելով: Մօնին կանգնած էր ախոռի դռան առաջը և նայում էր տատին: Տատը կթելը վերջացնելով ներս մտաւ տուն և ասաց. «արի, Մօնի, քաղցած կլինես»:

Նա արդէն ամեն բան պատրաստել էր և ինքն էլ Մօնիի հետ սեղան նստեց. թէև սեղանի վրայ բացի մի աման կաթով եփած եգիպտացորենից ոչինչ չկար, սակայն Մօնին մեծ ախորժակով վայելեց ճաշը և միևնոյն ժամանակ պատմեց տատին այդ օրուայ անցքերը. ճաշը վերջացնելուց լետոյ նա իսկոյն անկողին մտաւ, որովհետև առաւօտեան շատ վաղ նորից պէտքէ իր հօտը դէպի սարը քշէր:

Մօնին արդէն երկու ամառ էր անցկացրել այդ կերպ և այնպէս սովորել էր այդ կեանքին և իր այծերին, որ ուրիշ կերպ չէր էլ մտածում: Մօնին շարունակ իր տատի հետ էր ապրում, որովհետև մայրը վաղուց վախճանուել էր, իսկ հայրը փող վաստակելու յուսով գնացել էր Նիապօլիս գինուորական ծառայութեան մէջ մտնելու, կարծելով թէ այն-



տեղ հեշտութեամբ և աւելի շատ փող կարելի է ձեռք բերել:

Թէև նրա ամուսնու մայրը նոյնպէս չքաւոր էր, բայց վերցրեց իր աղջկայ անտէր թողած երեխային, փոքրիկ Սողոմոնին և ապրում էր նրա հետ միասին: Աստուծոյ օգնութեամբ նրանք առանց նեղութեան ապրում էին:

Պառաւ Եղսիին գիւղում ամենքն էլ յարգում էին և երբ, երկու տարի առաջ, այժարածի ընտրութիւն պէտքէ լինէր, բոլորն էլ միաձայն ընտրեցին Մօնիին, որովհետև ամենքն էլ ուզում էին, որ Մօնին մի բան վաստակելով օգնէ աշխատասէր Եղսիին: Բարեպաշտ տատն ամեն առաւօտ, երբ Մօնին տանից դուրս էր գնում, լիշեցնում էր. «Մօնի մի մոռանար, թէ դու այնտեղ, սարի վրայ, սրբան մօտ ես Աստծուն և որ նա ամեն բան տեսնում ու լսում է և ոչինչ չես կարող թազցնել նրանից: Բայց միւսնոյն ժամանակ մի մոռանար, որ նա մօտիկ է և քեզ օգնելու համար: Այդ պատճառով երբէք մի վախենայ և եթէ կարիքի ժամանակ սարի վրայ ոչոք չկայ, որ օգնութեան հասնի, դու օգնութեան կանչիր Աստծուն և նա կ'օգնէ քեզ»:

Այսպիսով Մօնին հէնց սկզբից կատարեալ

վստահութեամբ բարձրացաւ ամայի քարաժայռերի և բլուրների վրայ և երբէք այնտեղ չէր վախենում, որովհետև շարունակ մտածում էր. «Որքան աւելի բարձրանամ, այնքան աւելի կ'մօտենամ Աստծուն և այնքան աւելի ապահով կ'լինեմ»: Այդ էր պատճառը, որ Մօնին ոչինչ հոգս ու ցաւ չունէր և առաւօտից մինչև երեկոյ ուրախ էր, զարմանալի չէր ուրեմն, որ նա շարունակ սուլում, երգում, զուարճանում էր՝ իր սրտի ուրախութիւնն արտայայտելու համար:





### ԳԼՈՒԽ Բ.

ՄՕՆԻՆ ԱՆԻՆԻ ՎԵՐՍ.



Ետևեալ առաւօտը Պաու-  
լան սովորականից շուտ  
զարթեց. մի բարձրա-  
հընչիւն երգի ձայներն  
էիննրան քնահանարել:  
«Անպատճառ այծարա-  
ծը կլինի», ասաց նա. ան-  
կողնից վեր թռաւ և գէ-

պի պատուհանը վազեց:

Ճիշտ որ թարմ ու կարմիր այտերով Մօ-  
նին կանգնած էր այնտեղ և հէնց նոր էր  
պառաւ այծն իր ուղի հետ միասին ախոռից  
դուրս բերել: Այժմ նա մտրակը ճօճեց օդի  
մէջ և այծերը թռչկոտալով նրա շուրջ՝ ա-

ռաջ էին գնում գէպի վեր. յանկարծ Մօնին  
սկսեց իր երգը և լեռներն արձագանք տուին.

«Այնտեղ, վերևը, եղևնիների մէջ  
Թռչնակներն երգում են խմբովին.  
Եւ որովհետև անձրև է եկել,

Արևը նորից դուրս կգայ»:

«Այսօր նա իր ամբողջ երգը պէտքէ եր-  
գէ ինձ համար», ասաց Պաուլան, որովհետև  
Մօնին արգէն անյայտացաւ և նրա երգն այլ  
ևս որոշ չէր լսուում:

Մօնին կամաց-կամաց բարձրանում էր  
սարի վրայ. արևի առաջին ճառագայթներից  
կարմրած ամպերը ցրւում էին և լեռնային  
թարմ ու զով քամին սրվւում էր. հասնելով  
առաջին դարևանդին՝ ուրախութիւնից նա  
այնպիսի աղաղակ արձակեց գէպի հովիտը, որ  
ջերմկատանը քնողներից շատերը զարմացած  
աչքերը բաց արին, բայց շուտով կրկին փա-  
կեցին, որովհետև ճանաչեցին այդ աղաղակը  
և գիտէին, որ դեռ մի ժամ ևս կարող են  
քնել — այծարածը միշտ շատ վաղ էր գալիս:  
Մօնին կրկին շարունակեց իր ուղին և այ-  
ծերի հետ մի ժամուայ ճանապարհ էլ բարձ-  
րացաւ մինչև ամենաբարձր ժայռերը:

Որքան Մօնին բարձրանում էր, այնքան  
ևս զեղեցկանում էր նրա շուրջը. երբեմն



երբեմն նա նայում էր իր չորս կողմը և ապա հայեացքը գցելով հետզհետէ աւելի կապոյտ գոյն ստացող պարզ երկնքին, սկսում էր ուրախ սրտով ու բարձր ձայնով երգել. որքան բարձրանում էր, այնքան աւելի զուարթ էին հնչում նրա երգերը:

Մօնին հասաւ այն բարձրութեանը, ուր սովորաբար կանգ էր առնում և այսօր էլ ցանկանում էր մնալ: Այդ տեղը մի փոքրիկ ու կանաչազարդ բարձրավանդակ էր, որի դարեանդից ընդարձակ հորիզօն և ամբողջ հովիտն երևում էր: Այս դարեանդը կոչւում էր ժայռաբեմ. Մօնին ժամերով նստում էր՝ յատեղ, նայում շուրջը, սուլում ու երգում, իսկ այժերն արածում էին նրա շուրջը:

Մի փոքր հանգստանալուց յետոյ Մօնին մէջքից վերցրեց իր պաշարեղէնի քսակը, դրեց գետնի մէջ եղած փոքրիկ փոսի մէջ, որ ինքն էր փորել, և ժայռաբեմի վրայ տարածուեց. այդ մեծ հաճոյք էր պատճառում նրան:

Երկինքն այժմ մուգ-կապոյտ գոյն էր ստացել. հեռուից երևում էին բարձրագագաթ, ձիւնով ծածկուած ու սառցապատ լեռները, իսկ ներքևը տարածւում էր փայլուն ու կանաչապատ հովիտը: Մօնին պառկած այս ու

այն կողմն էր նայում, երգում ու սուլում:

Լեռնային քամին հովացնում էր նրա տաքացած դէմքը. երբ նա դադարում էր երգելուց, թռչուններն էին սկսում երգել ու նրա գլխի վրայով դէպ երկինք սլանում: Մօնիի ուրախութիւնն անկարելի է նկարագրել. երբեմն երբեմն մօտենում էր նրան Մէգէրլին և գլուխը նրա ուսերին քսում, ինչպէս որ միշտ էլ անում էր քնքշաբար, յետոյ սիրալի կերպով մկկում էր, անցնում Մօնիի միւս կողմը և նորից գլուխը քսում նրա ուսերին: Միւս այժերիցն էլ երբեմն մէկն էր մօտենում, երբեմն միւսը. այդպիսով նրանք հերթով այցելում էին իրանց սիրելի հովուին:

Թխահերը, Մօնիի սեպհական այժը, մեծ հոգացողութեամբ էր մօտենում նրան՝ տեսնելու թէ արդեօք ամեն բան կարգին է. յետոյ կանգնում էր մօտը և սպասում, մինչև որ Մօնին ասէր. «Այո՛, այո՛, թխահերս, ամեն բան լաւ է, գնա էլի արածիր»: Սպիտակ այժըն ու ծիծեռնակը — այդպէս էր կոչւում, որովհետև շատ բարակ ու արագոտն լինելով՝ ամեն տեղ այնպէս էր մտնում, ինչպէս ծիծեռնակներն իրենց բները — միասին այնպէս յարձակուեցին Մօնիի վրայ, որ եթէ պառկած չլինէր, գետին կընկնէր:



Մէգէրլիի մայրը, ջերմկատան պանդոկի տիրոջ այծը, որ փայլուն սև գոյն ունէր, մի փոքր հսկարտ էր. նա Մոնիից մի քանի քալլ հեռու էր կանգնում, նայում էր իր վեհապանձ գլխով՝ կարծես ուզում էր ցոյց տալ, որ ինքը շատ էլ մօտիկ բարեկամ չէ, և նորից հեռանում էր: Սակայն մեծ Սուլտանը, սէյզը, միշտ միայն մէկ անգամ էր գալիս, Մօնիի մօտ եղածներին քշում էր և այնպէս խորհրդաւոր կերպով մկկում՝ կարծես թէ տեղեկութիւններ ունի տալու ամբողջ հօտի դրութեան մասին, որի առաջնորդն էր զգում իրեն:

Միմիայն փոքրիկ Մէգէրլին երբէք չէր հեռանում իր պաշտպանի մօտից. երբ սէյզը գալիս էր և ուզում էր նրան հեռացնել, նա այնպէս թագնւում էր Մօնիի կռների ու գլխի տակ, որ մեծ Սուլտանն էլ չէր կարողանում տեղից շարժել նրան. և այսպիսով պաշտպանուած Մէգէրլին էլ չէր վախենում Սուլտանից՝ թէև ուրիշ ժամանակ նրա մօտենալը տեսնելով երկիւղից դողում էր:

Այս զբաղմունքով անցկացրեց Մօնին առաւօտը, ճաշեց ու մտազբաղ կանգնած էր՝ յենուած իր ցուպի վրայ, որ նրա անբաժան ընկերն էր՝ բարձրանալիս ու ցածրանալիս օգնելով նրան: Նա մտածում էր թէ ժայռի մի

այլ կողմն էլ բարձրանայ թէ ոչ. որ ճաշից յետոյ այծերի հետ աւելի բարձր պէտքէ գընար, այդ արդէն վճռուած խնդիր էր, բայց թէ որ կողմը—ահա այդ մասին էր մտածում նա այժմ: Նա վճռեց ձախ կողմը բարձրանալ, որովհետև այդ ճանապարհը տանում էր դէպի այն երեք վիշապաքարերը, որի շուրջը բուսած քնքոյշ թփերից կրճոտելն այծերի համար մի մեծ խնճոյք էր:

Ճանապարհը զառիվեր էր և վերևը, սեպ քարաժայռի վրայ վտանգաւոր տեղեր կային, բայց Մօնին գիտէր իր անելիքը և այծերն էլ այնքան խելօք էին, որ չէին ցրւում: Նա սկսեց բարձրանալ և այծերն էլ ուրախ-ուրախ դէպի վեր էին թռչկոտում նրա ետևից՝ երբեմն նրանից առաջ անցնելով, երբեմն էլ յետ մնալով. իսկ փոքրիկ Մէգէրլին միշտ նրա մօտն էր. խիստ զառիվեր տեղերում Մօնին բռնում էր նրան ու իր հետ տանում: Ամենքն էլ յաջողութեամբ բարձրացան և խկոյն բարձր թուփերէն անելով վազեցին դէպի կանաչ թփերը, որովհետև արդէն հեռուից ճանաչեցին իրենց սիրելի կերակուրը:

«Միայն հանդարտ, հանդարտ», զգուշացնում էր Մօնին. զառիվեր տեղերում միմեանց մի հարուածէք, եթէ ոչ մէկն ու մէկը իս-

7066-57



կոյն ցած կընկնէք ու ոտքերդ կ'ըտրդէք: Ծիծեռնակ, Ծիծեռնակ, այդ ի՛նչ էս անում», աղաղակեց նա վրդովուելով, որովհետև արագոտն այժն արդէն բարձրացել էր վիշապաքարերից էլ վերև և այժմ կանգնած էր մի քարի հէնց ափին և այնտեղից ժպիւրհ կերպով ցած էր նայում զէպի Մօնին: Նա շուտով վեր մագլցեց, որովհետև եթէ Ծիծեռնակը մի քայլ էլ անէր՝ իսկոյն անդունդը կընկնէր: Մօնին էլ արագագնաց էր. մի քանի վայրկեանում նա բարձրացաւ քարի վրայ, շտապով բռնեց Ծիծեռնակի ոտքից ու յետ քաշեց: «Այժմ հետս արի, անխելք անասուն», յանդիմանեց Մօնին, իր հետ քաշ տուեց նրան, տարաւ միւսների մօտ, մի առ ժամանակ էլ բռնած պահեց, մինչև որ նա սկսեց մի թփի տերևները կրծոտել և փախչելու մասին էլ չէր մտածում:

«Ո՞ւր է Մէգէրլին», լանկարծ աղաղակեց Մօնին, երբ տեսաւ որ սև այծը մենակ կանգնած մի զառիվայրի մօտ, չէր արածում և հանդարտ այս ու այն կողմն էր նայում: Փոքրիկ Մէգէրլին միշտ կամ Մօնիի մօտ էր լինում կամ թէ վազում էր մօր ետևից.

«Ո՞ւր է ուլդ, Սևուկ», աղաղակեց նա փախեցած ու թռաւ զէպի այծը: Սև այծը շատ

տարօրինակ էր. չէր արածում, տեղից չէր շարժւում և կասկածոտ կերպով սրում էր ականջները: Մօնին կանգնեց նրա կողքին ու սկսեց վերև ու ներքև նայել. նա լսեց մի կամաց ու ողբալի մկկոց. այդ Մէգէրլիի ձայնն էր, որ ներքևից էր լսւում՝ ողբալով ու օգնուլթիւն խնդրելով: Մօնին պառկեց գետնին և գլուխն առաջ տանելով ցած նայեց և տեսաւ որ բաւականին ցած, Մէգէրլին կախուած է մի ծառի ճիւղի վրայից և խղճալի ձայներ է արձակում. ուլը ցած էր ընկել: Բարեբաղտաբար ծառի ճիւղը կարողացել էր պահել նրան, եթէ ոչ նա անդունդը կընկնէր ու կը անշնչանար: Բայց այժմ էլ եթէ իրեն չ'կարողանար ճիւղի վրայ պահել՝ տեղն ու տեղն անդունդը կընկնէր ու ջարդ ու փշուր կլինէր: Մօնին երկիւղով զէպի ցած աղաղակեց. «ամուր կաց, Մէգէրլի, պինդ կաց ճիւղի վրայ, էս կ'գամ ու կ'ազատեմ քեզ». բայց ի՛նչ պէս գնար: Վերևից քարաժայռն այնպէս սեպացած էր, որ անկարելի էր այդտեղից իջնել. Մօնին լաւ գիտէր այդ, բայց պետք էր Մէգէրլիին ազատել. նա մտածեց որ ուլի գրտնուած տեղը մօտիկ պետք է լինի այն ժայռին, որի մէջ հովիւները պաշտպանւում էին անձրևի ժամանակ և այդ պատճառով կոչւում էր



անձրևաժայռ: Մօնին մտածում էր՝ թէ կարելի է այնտեղ շեղ գծով ժայռերի վրայ մագրել և ուլը բերել:

Նա շուտով սուլելով հօտը մի տեղ ժողովեց և նրանց հետ միասին ցած գնաց մինչև անձրևաժայռը. այնտեղ թողեց նրանց, որ արածեն ու ինքը գնաց դէպի ժայռը: Այդտեղ, իրենից դեռ բաւականին բարձր, տեսաւ ճիւղի վրայ կախուած ուլին. հեշտ չէր վերև մագրել և նորից ցած իջնել ուլը շալկած, բայց ուրիշ կերպ չէր կարելի ազատել խեղճին: Նա իսկոյն մտաբերեց, որ Աստուած կ'օգնի իրեն ու անվտանգ կ'մնայ: Մօնին ձեռքերը կցեց, հայեացքը դէպ երկինք ուղղեց և աղօթեց. «Ախ, սիրելի Աստուած, օգնիր ինձ, որ կարողանամ Մէգէրլիին ազատել»: Այժմ նա բոլորովին հաւատացած էր, որ ամեն բան յաջող կերթայ և աշխուժութեամբ մագրելով բարձրացաւ ժայռի վրայ, հասաւ ճիւղին, երկու ոտքով ամուր տեղ բռնեց և վերցնելով դողացող ու մկրկող այծը, ուսերի վրայ դրեց և մեծ ջանքով ու հոգացողութեամբ նորից ցած իջաւ: Բայց երբ արդէն ապահով կերպով ոտքը հաստատուն գետնի վրայ դրեց և վախեցած ուլին ազատուած տեսաւ, այնպէս ուրախացաւ, որ սկը-

սեց բարձրաձայն շնորհակալութիւն անել ու դէպ երկինք աղաղակել. «Ախ, սիրելի Աստուած, բիւր անգամ շնորհակալ եմ, որ օգնեցիր մեզ, որչափ ուրախ ենք երկուսս էլ»: Յետոյ մի փոքր ժամանակ գետնին նստեց, փաղաքշեց դեռ ևս շարունակ դողացող ուլին և մխիթարում էր նրան:

Երբ տուն վերադառնալու ժամանակն եկաւ, Մօնին ուլն իր ուսերի վրայ դրեց ու ասաց. «Ե՛կ, խեղճ Մէգէրլի, դու դեռ ևս դողում ես. այսօր չես կարող ոտքով գալ, ինքս կ'տանեմ քեզ» — և այդպիսով ամբողջ ճանապարհը նա ուլն ուսերի վրայ բարձած՝ ցած գնաց:

Պաուլան այդ միջոցին կանգնած էր ջերմրկատան առաջն եղող բլրի վրայ և սպասում էր այժարածին: Նրա մօրաքոյրն էլ հետն էր: Երբ Մօնին իր բեռով մօտեցաւ նրանց, Պաուլան ցաւակցելով հարցրեց թէ արդեօք ուլը հիւանդ է: Մօնին իսկոյն գետնի վրայ նստեց նրա մօտ և պատմեց այսօրուայ պատահած արկածը:

Օրիորդը կարեկցութեամբ փաղաքշեց ազատուած Մէգէրլիին, որ այժմ հանդարտ նստած էր Մօնիի ծնկների վրայ և շատ սիրուն էր երևում իր սպիտակ ոտքերով ու գեղեցիկ սև մէջքի մազերով:



«Քանի որ նստած ես, մի անգամ էլ երգիր ինձ համար քո երգը», ասաց Պաուլան: Մօնին այնպէս ուրախ էր, որ սիրով սկսեց ու ամբողջ երգը մինչև վերջն երգեց:

Երգն այնպէս դուր եկաւ օրիորդին, որ խնդրեց Մօնին լաճախ երգել նոյնը: Յետոյ բոլորն էլ իջան դէպի ջերմկատունը, ուր Մօնին տեղաւորեց ուլը և հրաժեշտ տալով հեռացաւ. Պաուլան գնաց իր սենեակը և երկար ու բարակ պատմում էր մօրաքրոջը փոքրիկ այծարածի մասին, որի առաւօտեան երգը դեռ այժմ էլ ուրախացնում էր նրան:



### ԳԼՈՒԽ Գ.

ՄԻ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ



Երգէս անցան շատ օրեր՝ մէկը միւսից պարզ ու արեւաչին, որովհետև ամբողջ ամառը լաւ անցաւ. երկինքը միշտ անամպ ու կապույտ էր առաւօտից մինչև երեկոյ:

Առանց բացառութեան, ամեն առաւօտ այծարածն երգելով անցնում էր ջերմկատան առաջով ու ամեն երեկոյ կրկին երգելով վերադառնում. ջերմկատան բոլոր հիւրերն այնպէս ընտելացել էին Մօնիի ուրախ երգին, որ ոչ ոք դրանցից չէր ուզում զրկուել այդ երգի հնչիւնները լսելուց:



Մօնիի զուարթ ու անտրտունջ կեանքն ամենից աւելի ուրախութիւն էր պատճառում Պաուլային, որ համարեան ամեն երեկոյ դիմաւորում էր նրան ու հետը խօսելով իջնում ցած:

Մի պայծառ առաւօտ Մօնին բարձրացել էր կրկին վերև և հէնց ուզում էր տարածուել ժայռաբեմի վրայ, երբ ուրիշ բան միտըն ընկաւ. «Ո՛չ, յառաջ, վերջին անգամ, երբ Մէգէրլին ցած ընկաւ, թփերի համեղ տերևներն այնտեղ թողիք, այժմ նորից բարձրանանք և դուք կարող էք բոլորը վերջացնել»: Այժերն էլ ուրախ թռչկոտալով նրա ետևից գնացին, նկատելով որ դէպի վիշապաքարերի սիրուն թփերն են գնում: Բայց այս անգամ Մօնին ամբողջ ժամանակն ուլը ձեռքից բաց չ'թողեց և ժայռերից ամենալաւ տերևները պոկելով իր ձեռքով կերակրում էր նրան: Ուլին շատ դուր եկաւ այդ. երբեմն-երբեմն նա գլուխը քսում էր Մօնիի ուսերին և ուրախ մկկում: Այդպէս անցաւ ամբողջ առաւօտը, և Մօնին միայն իր քաղցից նկատեց, որ արդէն ուշ է. բայց իր ուտելիքը նա թողել էր ժայռաբեմի փոքր փոսի մէջ ընկած, որովհետև մտադիր էր ճաշին կրկին վերադառնալ:

«Դուք արդէն բաւականին կշտացաք, իսկ

ես դեռ ոչինչ չեմ ճաշակել», ասաց Մօնին իր այժերին, «այժմ ես էլ ուզում եմ մի բան ուտել, դուք ներքևն ևս բաւականին ուտելու բան կ'գտնէք. եկէք»: Ասաց, բարձր սուլեց և ամբողջ հօտը տեղից շարժուեց. ամենից առաջ գնում էին թեթևաշարժներն ու արագագնացները, իսկ բոլորից առաջ գնում էր արագոտն Ծիծեռնակը, որին այսօր մի անըստ պատելի բան պէտքէ պատահէր: Նա քարիցքար էր թռչկոտում և երբեմն էլ ժայռերի ճեղքուածների վրայից թռչում, բայց լանկարժայլ ևս առաջ գնալ չէր կարողանում — անմիջապէս նրա առաջը, բոլորովին անսպասելի կերպով, կանգնեց մի քարայծ և հետաքրքրութեամբ նայում էր նրա երեսին:

Ծիծեռնակն այդպիսի բան չէր տեսել. նա կանգնեց, զարմանքով նայեց այդ օտարականին և սպասում էր, որ նա ճանապարհ տայ իրեն և թողնի քարաժայռի վրայ թռչելու, ինչպէս որ մտադիր էր ինքը: Բայց քարայծը տեղից չ'շարժուեց և համարձակ նայում էր Ծիծեռնակի երեսին: Այդպէս նրանք կանգնած էին միմեանց առաջը կամակորութեամբ և մինչև այսօր էլ այնտեղ կանգնած կը մնային, եթէ այդ միջոցին չմօտենար մեծ Սուլտանը: Նա իսկոյն հասկացաւ բանի



էութիւնը, մեծ ակնածութեամբ Յիծեռնակի մօտովն անցաւ և յանկարծ այնպիսի ուժով մի կողմը հրեց քարայծին, որ նա ստիպուած էր մի համարձակ թռուցք անելով միայն ազատուել ժայռի վրայից ցած ընկնելուց: Ծիծեռնակը յաղթանակով շարունակեց իր ճանապարհը: Իսկ Սուլտանը քայլում էր նրա ետեւից հպարտ ու գոհ կերպով, որովհետև իրեն համարում էր ամբողջ հօտի այծերի հաւատարիմ պաշտպան: Այդ միջոցին վերևից Մօնին, իսկ ներքևից մի ուրիշ այծարած միասին հասան մի տեղ և նոյնպէս զարմացած միմեանց նայեցին: Բայց նրանք միմեանց ճանաչում էին և առաջին զարմանքից յետոյ ուրախ բարևեցին միմեանց: Կիւբլիս գիւղի Եօրգլին էր այդ տղան, որ առաւօտն իզուր էր որոնել Մօնին և այժմ միայն պատահեց նրան այնտեղ, ուր բոլորովին չէր սպասում:

«Ես չէի կարծում, որ այդքան բարձր կ'երթաս այծերիդ հետ», ասաց Եօրգլին:

«Ի հարկէ գնում եմ», պատասխանեց Մօնին, բայց ո՛չ միշտ. սովորաբար ժայռաբեմի վրայ և նրա շուրջն եմ լինում. Ինչո՞ւ ես այս կողմերն եկել»:

«Քեզ այցելելու եկայ», պատասխանեց նա, «շատ բան ունեմ պատմելու: Հետս էլ երկու

այծ ունեմ, որ տանում եմ ջերմկատան պանդոկի տիրոջ համար, նա ուզում է մէկը գրնել»:

«Այդ այծերը քոնն են», հարցրեց Մօնին:

«Ի հարկէ մերն է, ես ուրիշի այծերը չեմ պահում, ես այլ ևս այծարած չեմ»:

Այդ լսելով Մօնին շատ զարմացաւ, որովհետև Եօրգլին իր հետ միասին էր Կիւբլիս գիւղի այծարածը դարձել և նա չէր կարողանում ըմբռնել թէ ինչպէս կարելի է այդ պաշտօնը թողնել և մինչև անգամ չափսոսալ:

Այդ խօսակցութեան միջոցին հովիւներն ու այծերը հասան ժայռաբեմ կոչուած տեղը: Մօնին մի կտոր հաց ու ապուխտ հանեց ու Եօրգլին ճաշի հրաւիրեց. երկուսն էլ նստեցին և մեծ ախորժակով վայելեցին, որովհետև բաւականին ուշ էր և երկուսն էլ առաւօտուանից ոչինչ չէին ճաշակել: Երբ ճաշը վերջացրին ու վրայից էլ մի փոքր այծի կաթ խմեցին, Եօրգլին ամբողջ մարմնով տարածուեց յատակի վրայ ու գլուխը շարեց երկու արմունկներին, իսկ Մօնին մնաց նստած, որովհետև սիրում էր գէպի հովիտը ցած նայել:

«Այժմ ի՞նչ պաշտօն ունիս, Եօրգլի, այծարածութիւնը թողնելուց յետոյ», հարցրեց



Մօնին, «չէ որ մի գործով պէտք է զբազուեաս»:

«Ի հարկէ գործ ունեմ և լաւ գործ», պատասխանեց Եօրգլին, «ձու ծախող եմ այժմ. ամեն առաւօտ պանդոկներն ու ճաշարանները ձու եմ տանում. ջերմկատան ճաշարանի համար էլ եմ բերում, երէկ արդէն այնտեղ էի»:

Մօնին գլուխը շարժեց. «դատարկ բան է, ես չէի ցանկանալ ձու ծախող լինել, հազար անգամ աւելի լաւ է այժեր արածացնելը»:

«Ինչո՞ւ համար»:

«Զուերը կենդանի չեն, նրանց հետ չես կարող մի խօսք անգամ խօսել և նրանք չեն կարող այժերի նման ետեւիցդ վազել. այժերը քո գալը տեսնելով ուրախանում են, սիրում են քեզ և ասածդ խօսքերը հասկանում են, իսկ ձուերի հետ չես կարող այդպէս ուրախանալ»:

«Ի՛հ, դու էլ, ընդհատեց նրան Եօրգլին, ի՛նչ ուրախութիւն ես զգում այստեղ. հէնց այս րօպէիս, ճաշելու ժամանակ վեց անգամ տեղիցդ վեր կացար մի ուլի պատճառով թէ ինչ է ցած չգլորուի. անդ է քո ուրախութիւնը»:

«Այո՛, ես այդ մեծ սիրով եմ անում, այնպէս չէ Մէգէրլի, արի՛, արի՛», Մօնին տեղից վեր թռաւ և վազեց ուլի ետեւից, որ շատ անգգոյշ թուցքներ էր անում: Երբ նա կրկին նստեց, Եօրգլին ասաց.

«Ուրիշ միջոց էլ կայ ուլերին պահելու, որ ժայռերից չգլորուին և դու էլ ստիպուած չ'լինես անդադար նրա ետեւից վազելու»:

«Այդ ի՛նչ միջոց է», հարցրեց Մօնին:

«Պէտքէ գետնի մէջ մի ցից ամրացնել և այժի մի ոտը վրան կապել, թէև այժը շատ կ'ոստոստայ, բայց չի կարող փախչել»:

«Երբէք չ'կարծես, որ ես այդպիսի բան կարող եմ անել, ասաց Մօնին զայրանալով ու մօտ քաշելով Մէգէրլիին պինդ բռնեց նրան՝ կարծես թէ ուզում էր նրան պաշտպանել մի այդպիսի վարմունքից:

«Այդ ուլի համար էլ հոգսեր չես ունենայ, սկսեց կրկին Եօրգլին, դա ալ ևս այստեղ, վերև չի բարձրանայ»:

«Ի՛նչ, ի՛նչ, ի՛նչ ես ասում Եօրգլի» ասաց Մօնին:

«Վահ, դեռ չգիտես. պանդոկի տէրը չի ուզում դրան մեծացնել, ասում է թէ շատ թույլ է և դրանից մի օրինաւոր այժ չի դուրս գալ: Նա ուզում էր հօրս վրայ ծախել, բայց



հայրս չ'գնեց. այդ պատճառով պանդոկի տէ-  
րը վճռեց եկող շաբաթ դրան մորթել և մեր  
այծը գնել»:

Մօնին երկիւղից բոլորովին գունաթա-  
փուել էր: Առաջ ոչ մի խօսք չ'կարողացաւ  
ասել, յետոյ սկսեց լալ ու աղաղակել.

«Ո՛չ, ո՛չ, այդ չեն կարող անել, Մէգէր-  
լի, չպէտքէ մորթեն քեզ, ես չեմ կարող  
տանել այդ: Ո՛հ, աւելի լաւ է, որ ես էլ  
քեզ հետ մեռնեմ. ո՛չ, այդ չի կարող լինել»:

«Այդպէս մի անի», ասաց բարկացած  
Եօրգլին և վեր բարձրացրեց Մօնին, որ  
երեսի վրայ տարածուել էր գետնին: «Վեր  
կաց, դու գիտես որ ուլը պանդոկի տիրոջն  
է պատկանում, և նա ինչ որ կուզէ, կարող  
է անել նրան: Գրա մասին էլ մի մտածիր.  
վեր կաց, մի ուրիշ բան էլ ունեմ ասելու  
քեզ, տես, տես»: Այդ ասելով Եօրգլին մի  
ձեռքը մեկնեց դէպի Մօնին, իսկ միւսով հա-  
մարեա՛ թէ բոլորովին ծածկեց այն առարկան,  
որով պէտքէ զարմացնէր նրան. բայց ձեռքի  
միջից մի բան զարմանալի կերպով փալփուում  
էր՝ արևի ճառագայթներն ընկել էին վրան:

«Ի՛նչ է այդ», հարցրեց Մօնին:

«Գուշակիր» — «մատանի՞ է»:

«Ոչ, բայց դրա նման մի բան».

«Ո՞վ տուեց քեզ».

«Տուեց, ոչ ոք, ինքս գտայ»:

«Ուրեմն քեզ չէ պատկանում, Եօրգլի»:

«Ինչո՞ւ. ուրիշից չեմ վերցրել. քիչ մնաց  
ոտքս վրան դնէի, հօ կիշրուէր. նշանակում  
է որ այժմ իմն է»:

«Ո՞րտեղ գտար»:

«Երէկ երեկոյեան ջերմկատան մօտ գտայ»:

«Ուրեմն այդ տանը բնակուողներից մէկն  
է կորցրել. պէտք է պանդոկի տիրոջը յայտ-  
նես, իսկ եթէ դու չես յայտնի, ես ինքս կ'ա-  
սեմ այս երեկոյ»:

«Ո՛չ, ո՛չ, Մօնի, չասես», ասաց այժմ  
Եօրգլին աղաչելով. «Տես, ցոյց տամ քեզ թէ  
ինչ բան է, յետոյ կ'տանեմ պանդոկներում  
ծառայող աղախիններից մէկի վրայ կ'ծախեմ.  
նա ինձ երևի չորս ֆրանկ կ'տայ. դրանից  
մէկ կամ երկու ֆրանկ քեզ կտամ և այդպի-  
սով ոչ ոք չի իմանայ»:

«Ես ոչինչ չեմ ուզում, չեմ ուզում», ընդ-  
հատեց նրան բուռն կերպով Մօնին, Աստուած  
արգէն լսեց բոլոր ասածներդ»:

Եօրգլին դէպ երկինք նայեց. «այդքան  
հեռո՞ւից», ասաց նա կասկածելով, բայց իսկոյն  
սկսեց ցածր ձայնով խօսել:



«Նա դարձեալ լսում է ասածը», ասաց Մօնին վստահօրէն:

Եօրգլին սկսեց վախենալ. եթէ նա Մօնին իր կողմը չքաշէր՝ ամեն բան կորած էր. նա մտածում էր. «Մօնի, ասաց նա յանկարծ, քեզ ուրախացնող մի բան կ'խոստանամ, եթէ իմ գտածի մասին ոչ ոքի բան չես ասի. եթէ համաձայն ես այնպէս կանեմ, որ հայրս կ'զնի Մէգէրլիին և այգպիսով նա մորթուելուց կ'ազատուի, ուզո՞ւմ ես»:

Մօնիի սրտում սաստիկ կռիւ ծագեց: Նա անարդար էր գտնում ֆլտածը գաղտնի պահելուն օգնելը: Այդ միջոցին Եօրգլին բաց էր արել ձեռքը, որի մէջ երևում էր մի խաչ բազմաթիւ թանկագին քարերով ծածկուած, որոնք ամեն գոյնով փալփլում էին: Մօնին լաւ տեսնում էր, որ մի անպէտք բան չէր այդ և շուտով տէրն այս ու այն կողմը կ'հարցնէր. նա այնպէս էր զգում իրեն՝ իբրև թէ ինքն է իր մօտ պահում՝ ոչ ոքի բան չասելով այդ մասին: Բայց միևս կողմից նրա սիրելի, փոքրիկ Մէգէրլին սարսափելի կերպով մի դանակի հարուածով պէտք է սպանուէր. և ինքը կարող է դրա առաջն առնել եթէ լուէ: Հէնց այդ ըոպէին փոքրիկ ուլը պառկած էր նրա մօտ այնպիսի վստահութեամբ,

որ կարծես թէ գիտէր, որ Մօնին կ'օգնէ իրեն. ո՛չ, նա չէր կարող թոյլ տալ այդ, նա պէտք է ազատէ նրան»:

«Համաձայն եմ, Եօրգլի», ասաց նա տրիւրուլութեամբ:

«Ուրեմն խփիլ ձեռքդ», պատասխանեց նա և բաց ձեռքը մեկնեց դէպի Մօնին, որովհետև միայն այդ կերպ տուած խոստումն էր համարուում անդրժելի:

Եօրգլին շատ ուրախ էր, որ իր գործը լաւ տարաւ, բայց տեսնելով որ Մօնին էլ չի խօսում և իր ճանապարհն էլ հեռու է, լաւ համարեց բաժանուել նրանից. նա հրաժեշտ տուեց Մօնիին, սուլեց, ջոկեց իր երկու այծերն, որոնք միացել էին Մօնիի այծերի խմբին—երկու կողմից էլ միմեանց հարուածելով որովհետև ֆիզերիսի այծերը դեռ չէին լսել թէ հիւրերի հետ լաւ պէտք է վարուել, իսկ Կիւրլիսի այծերը չ'գիտէին՝ թէ հիւր զնալով իսկոյն ամենալաւ խոտը չ'պէտքէ որոնէին և ուրիշներին քշէին: Երբ Եօրգլին բաւականին իջել էր, Մօնին էլ ճանապարհ ընկաւ իր հօտի հետ, բայց ամբողջ ճանապարհին նա ո՛չ խօսեց, ո՛չ երգեց և ո՛չ մի ձայն հանեց:



### ԳԼՈՒԽ Դ.

ՄՕՆԻՆ ԷԼ ՉԻ ԿԱՐՈՂԱՆՈՒՄ ԵՐԳԵԼ.



Մաջորդ օրը Մօնին նախընթաց օրուայ պէս լուռ ու մունջ բարձրացաւ դէպի շերմկատունը, առանց ձայն հանելու ախուից դուրս բերեց պանդոկի տիրոջ այծերը և սկրսեց կրկին բարձրանալ առանց երգելու: Նա գնում էր գլուխը կախ գցած և կարծես թէ մի բանից վախենում էր. տեղ տեղ էլ երկչոտ հայեացք էր գցում իր շուշը՝ թէ արդեօք ոչ ոք չէ գալիս իր ետևից՝ մի բան հարցնելու: Մօնին էլ չէր կարողանում ուրախանալ՝

ինքն էլ չիմանալով թէ ինչու. նա ուզում էր ուրախանալ և երգել, որ Մէգէրլին մորթելուց ազատեց, բայց չէր կարողանում: Երկինքն էլ այսօր ամպամած էր և Մօնին կարծում էր թէ երբ արևը դուրս գայ՝ ինքն էլ կարող է զուարթանալ:

Երբ նա սարի կատարը հասաւ, անձրևը վրայ տուեց և շուտով հեղեղի նման էր թափուում երկնքից. Մօնին մտաւ անձրևաժայռի մէջ:

Այծերն էլ՝ եկան և ժայռի տակ պատրուպարուեցան. սև այծը խնայելով իր սիրուն ու փայլուն մազերը՝ Մօնիից էլ առաջ էր ժայռի տակը մտել. նա նստած Մօնիի ետևը՝ գոհ կերպարանքով դիտում էր դրսի անձրևը: Մէգէրլին կանգնած էր իր պաշտպանի մօտ և գլուխը քնքշաբար քսում էր նրա ծնկներին և յետոյ զարմանքով նայում նրան, որովհետև Մօնին սովորականի նման ոչ մի խօսք չէր ասում: Մօնիի թխահեր այծն էլ պառկել էր նրա ոտքերի տակ ու մկկում էր, որովհետև ամբողջ առաւօտը նա էլ մի խօսք չէր լսել: Մօնին նստած էր մտածողութեան մէջ ընկրդմած ու իր ցուպի վրայ յենուած:

Նա կրկին մտածում էր Եօրգլին տուած խոստման վրայ և իրեն այնպէս էր թւում՝



Թէ Եօրգլին մի բան գողացել է և ինքն էլ մասնակից է այդ գողութեան՝ քանի որ իր լռելու փոխարէն վարձատրութիւն է ստանում. նա անարդար բան էր արել և Աստուած էլ այժմ ընդդէմ էր նրան. Մօնին ըզգում էր այդ և լաւ որ անձրև ու մութն էր և ինքն էլ ժայռի տակ էր թաղնուած, եթէ ոչ նա չէր կարող սովորականի նման կապուտակ երկնքին նայել. այժմ նա վախենում էր Աստծուց: Մօնին մտածում էր. եթէ Մէգէրլին մի անգամ էլ ժայռից ցած ընկնի և ինքը կամենայ նրան ազատել՝ Աստուած էլ չի օգնի իրեն և ինքն էլ իրաւունք չի ունենայ աղօթելու և նրանից օգնութիւն խնդրելու. և եթէ այդպէս անապահով կերպով իջնի՝ կարող է սայթաքել, Մէգէրլիի հետ միասին անդունդը գլորուել և երկուսն էլ բոլորովին պատռտուած ու ջարդուած կմնան այնտեղ—Ո՛չ, ասում էր նա երկիւղով իր սրբտում. այսպէս չպէտք է լինէր, այնպէս պէտք է անեմ, որ կրկին կարողանամ բաց սրտով Աստծուն աղաչել. այսպիսով միայն կարող կը լինեմ նորից ուրախութիւն զգալ: Նա ուզում էր իրեն ճնշող ծանրութիւնը դէն գցել, ուզում էր դնալ պանդոկի տիրոջ մօտ և ամեն բան պատմել նրան—բայց լետո՛յ: Յետոյ

Եօրգլին իր հօրը չէր համոզի՝ պանդոկի տիրոջից դնել ուլը, իսկ վերջինս էլ կ'մորթէր Մէգէրլիին: Ո՛հ, ո՛չ, ո՛չ, այդ անտանելի էր նրա համար և բացագանչեց. «ո՛չ, չեմ անի, ոչինչ չեմ ասի»: Բայց այդպիսով նրա սիրտը չ'հովացաւ և ճնշող ծանրութիւնն աւելի ևս մեծանում էր: Այդպէս անցկացրեց Մօնին ամբողջ օրը: Երեկոյեան նա առաւօտեան նման անձայն վերադարձաւ. ջերմկատան մօտ նրան մօտեցաւ Պաուլան և կարեկցաբար ասաց. «Մօնի, ի՞նչդ է ցաւում, ինչո՞ւ էլ չես երգում»: Մօնին երկիւղով երեսը շրջեց ու ասաց. «Չեմ կարող». լետոյ որքան կարելի էր արագ հեռացաւ այնտեղից իր այծերի հետ:

Պաուլան վերև բարձրանալով մօրաքրոջն ասաց. «Երանի գիտենայի թէ ի՞նչ է պատահել մեր փոքրիկ այծարածին, նա բոլորովին փոխուել է ու էլ չի կարելի ճանաչել նրան— երանի՛ թէ նա նորից երգէր»:

«Երևի սաստիկ անձրևն է նրան վատ տրամադրել», պատասխանեց մօրաքոյրը:

«Ամեն բան միասին է պատահում, մօրաքոյր, վերադառնանք մեր տուն», խնդրում էր Պաուլան, «այստեղ էլ ոչ մի գուարճութիւն չկայ. ես կորցրի իմ գեղեցիկ խաչը, որ էլ չի գտնուում, անձրևն էլ անվերջ գալիս է



և մինչև իսկ ուրախ այծարածի երգի ձայնը լսելուց էլ գրկուեցինք. գնանք այստեղից»:

«Բժշկուելը պէտքէ շարունակենք մինչև վերջը, առաջ չենք կարող գնալ», բացատրեց մօրաքոյրը:

Յաջորդ օրն էլ մուլթն ու խաւար էր. անձրևն անդադար գալիս էր: Այդ օրն էլ Մօնին նախընթացի պէս անցկացրեց: Նա նըստած էր ժայռի տակը և միշտ միևնոյն բանն էր մտածում. երբ արդէն վճռում էր. «կ'երթամ և իմ արած անարդարութիւնը կ'պատմեմ, որ կարողանամ հանգիստ սրտով Աստուծուն նայել», նորից մտաբերում էր ուլի մորթուիլը և նորից սկսում մտածել: Այսպէս մտամոլոր ու սրտի ծանրութիւնից ճնշուած, անձրևի տակ դրչուելով վերադառնում էր տուն:

Ձերմկատան մօտ կանգնած պանդոկապետը տեսնելով նրան՝ ասաց. «Ինչ ես խղունջի նման սարից ցած սողում. մնացել եմ զարմացած, ինչ է պատահել քեզ»:

Պանդոկապետն երբէք այսպէս կոպիտ չէր եղել, այլ ընդհակառակը միշտ բարեկամական ու սիրելի խօսքեր էր ասել Մօնիին. այծարածի կերպարանափոխուիլը չէր դուր գալիս նրան և բացի դրանից նա այժմ առհասարակ վատ էր տրամադրուած, որովհետև օրիորդ

Պաուլան գանգատուել էր նրան իր կորստի համար և հաստատ կերպով ասել՝ որ թանկագին խաչը կորել է տանը կամ թէ անմիջապէս տան դռան առաջը, որովհետև այդ օրը Պաուլան միայն երեկոյեան էր դուրս եկել այծարածի երգը լսելու և ոչ մի տեղ չէր գնացել: Պանդոկի տիրոջը շատ բարկացնում էր այն միտքը, որ իր տանը կարող է մի թանկագին իր կորչել ու էլ չ'գտնուել: Մի օր առաջ նա ժողովել էր տան բոլոր ծառայողներին, հարց ու փորձ արել, սպառնացել ու գտնողին վարձատրութիւն խոստացել: Այդ կորուստի վրայ ամբողջ տունն իրարանցման մէջ էր:

Երբ Մօնին իր այծերի հետ անցնում էր տան առաջովը, տեսաւ որ Պաուլան կանգնած է այնտեղ: Պաուլան սպասում էր նրան. երբ Մօնին արագ անցնում էր նրա մօտով՝ Պաուլան կանչեց. «Մօնի, Մօնի, մի՛թէ դու նոյն այծարած տղան ես, որ առաւօտից մինչև երեկոյ երգում էր»:

Մօնին լսեց այդ խօսքերը, չ'պատասխանեց, բայց նրանք մեծ ազդեցութիւն ունեցան նրա վրայ:

Ո՛հ, ի՛նչ լաւ էր այն ժամանակը, երբ ինքն ամբողջ օրը կարողանում էր երգել. երանի՛ թէ այդ օրերը կրկին գային:



Մօնին կրկին բարձրացաւ սարը՝ տխուր ու անձայն: Անձրեն ընդհատուել էր, բայց սարերը դեռ ևս ծածկուած էին թանձր մառախուղով և երկինքը ծածկուած էր մութ ամպերով: Մօնին կրկին նստեց իր ժայռի տակ և սկսեց կրկին կուռել իր մտքերի հետ: Չաշի ժամանակ երկինքը հետզհետէ պարզուեցաւ ու խաւարն անյայտացաւ: Մօնին դուրս եկաւ փոսից և նայեց շուրջը: Այժերը նորից ուրախ թռչկոտում էին այս ու այն կողմը, ուն էլ էր ուրախացել՝ արևի դուրս գալը տեսնելով և թռոյցքներ էր անում:

Մօնին կանգնած էր ժայռաբեմի վրայ և դիտում՝ թէ ինչպէս աստիճանաբար պարզւում ու զեղեցկանում են՝ ներքեւը հովիտը, իսկ վերեւը սարերը: Ամպերը ցրուեցան և պայծառ ու կապուտակ երկինքն երևաց: Մօնին այնպէս թուաց թէ պայծառ կապուտակից Աստուած ինքն է նայում իրեն և միանգամից նրա սիրտը թեթևացաւ և իմացաւ թէ ինչ պէտք է անէ. նա էլ չէր կարող անարդարութիւնը գաղտնի պահել, պէտք է յայտնէր: Յետոյ գրկեց իր մօտը կանգնած Մէգէրլին ու ասաց քնքշաբար.

«Խեղճ Մէգէրլի, արի՛ ինչ որ կարողացայ, բայց այդ անիրաւութիւն է և չ'պէտքէ անել.

բայց ո՛հ, երանի թէ չ'զոհուէիր, այդ անտանելի կլինի ինձ համար»: Եւ նա սկսեց այնպէս լալ, որ էլ չկարողացաւ խօսել. ուլը մկկում էր թախճալի կերպով և մտնում նրա թևերի տակ՝ կարծես թէ ապահով լինելու համար ուզում էր թագնուել: Մօնին ուլը դրեց ուսերին.

«Արի, Մէգէրլի, այսօր էլ ուսերիս վրայ կտանեմ քեզ, գուցէ այդ վերջին անգամը լինի»:

Երբ հօտը ջերմկատանը մօտեցաւ, Պաուլան կրկին այնտեղ էր կանգնած: Մօնին սև այծն և ուլը տարաւ ախոռը և փոխանակ իր ճանապարհը շարունակելու, առաջ եկաւ և օրիորդի մօտով ուզում էր տուն մտնել: Պաուլան կանգնեցրեց նրան.

«Էլի՛ առանց երգի, Մօնի, ո՛ւր ես գընում այդպէս տխուր դէմքով»:

«Պանդոկապետին բան ունիմ ծանուցանելու», պատասխանեց Մօնին, առանց աչքերը բարձրացնելու:

«Ծանուցանելո՞ւ. ինչ բան, չե՞մ կարող իմանալ»:

«Պանդոկապետին պէտքէ ասեմ, որ մի բան է գտնուել»:



«Գտնուէլ, թնչ, ես էլ մի բան եմ կորցրել, մի սիրուն խաչ»:

«Այո՛, հէնց այդ է»:

«Ի՞նչ ես ասում», աղաղակեց Պաուլան յանկարծակի գալով, «փալփլող քարերով խաչն է»:

«Այո՛, հէնց այդ»:

«Ո՞րտեղ ունես, Մօնի, տո՛ւր ինձ, դո՛ւ գտար»:

«Ո՛չ, Կիւբլիս գիւղի Եօրգլին».

Պաուլան ուզեց իսկոյն իմանալ թէ ո՞վ է Եօրգլին, որտեղ է ապրում և անմիջապէս մարդ ուղարկել գիւղը՝ խաչը բերելու:

«Ես շուտ կերթամ և եթէ խաչը դեռ նրա մօտն է, իսկոյն կ'բերեմ» — ասաց Մօնին:

«Եթէ դեռ նրա մօտն է», աղաղակեց Պաուլան, «ինչո՞ւ նրա մօտ չպէտք է լինի». և դու իրտեղից գիտես այդ բոլորը, Մօնի. նա երբ է գտել խաչը և դու երբ ես իմացելը»:

Մօնին գետնին նայեց. նա ամաչում էր ասել թէ ինչպէս է եղել և թէ ինչպէս ինքըն էլ օգնել է գաղտնի մնալուն՝ մինչև որ էլ չի կարողացել դիմանալ:

Բայց Պաուլան շատ բարի էր. նա մի կողմը քաշեց Մօնիին, նստեց մի ծառի բնի վրայ նրա մօտ և ասաց բարեկամաբար.

«Արի՛ ինձ մօտ և պատմիր բոլորը, ինչպէս որ եղել է, Մօնի, ես ուզում եմ ամեն բան քեզնից իմանալ»:

Մօնին սիրտ առաւ ու պատմեց բոլորը. հաղորդեց նոյնպէս իր սրտի կռիւը Մէգէրլիի պատճառով և թէ ինչպէս ինքը զրկուելով ամեն ուրախութիւնից ու զուարճութիւնից՝ չէր կարողանում Սատճուն նայել և թէ այսօր էլ չի կարողացել դիմանալ ու վճռել է ծանուցանել:

Պաուլան աւելի սիրով սկսեց խօսել նրա հետ ու ասաց. «դու պէտք է իսկոյն գայիր և ծանուցանէիր, բայց լաւ է որ գոնէ այժմ եկար ու ամեն բան պատմեցիր, չես զղջայ»: Յետոյ ասաց որ կարող է Եօրգլիին տասը Փըրանկ խոստանալ՝ եթէ խաչը լետ ստանայ:

«Տասը Փրանկ» կրկնեց Մօնին զարմացած, որովհետև գիտէր թէ Եօրգլին թնչ գնով էր ուզում ծախել խաչը: Մօնին տեղից վեր կացաւ և իսկոյն ուզում էր Կիւբլիս գնալ, որ եթէ խաչը ստանայ՝ միևս առաւօտը վաղ օրիորդին յանձնի: Նա սկսեց վազել և կարողանում էր կրկին մեծ թռոյցքներ անել. նրա սիրտը նորից թեթևացաւ, ծանր քարն էլ չէր ճնշում նրան:

Տուն հասնելուն պէս Մօնին այժը տեղաւո-



րեց, մեծ մօրն ասաց թէ մի լանձնարարութիւն ունի կատարելու և իսկոյն ցած վազեց զէպի Կիւբլիս զիւղը: Նա Եօրգլին տանը գտաւ և և պատմեց բոլորը: Եօրգլին սկզբումը շատ բարկացաւ, բայց երբ մտածեց թէ ամեն բան լայտնուել է, հանեց խաչն ու ասաց. «Արդեօք մի բան կտայ ինձ»:

«Այո՛, կտեսնես, Եօրգլի», ասաց Մօնին զայրացած, «պատուաւոր ճանապարհով դու իսկոյն տասը Փրանկ կտանայիր, իսկ ստախօսութեամբ ու խաբեբայութեամբ միայն չորս Փրանկ. այժմ էլ կտանաս տասը Փրանկ»:

Եօրգլին լանկարծակի եկաւ. նա զղջաց «ը խաչը գտնելով իսկոյն ջերմկատուն չէ գընացել, քանի որ հէնց այդ տան դռան առաջըն էր գտել. այժմ իր խիղճը հանգիստ չէր, իսկ այն ժամանակ այդպէս չէր լինի. բայց արդէն ուշ էր: Նա խաչը լանձնեց Մօնիին և սա էլ իսկոյն շտապով տուն վերտդարձաւ. արդէն մոլթն էր»:



## ԳԼՈՒԽ Ե.

ՄՕՆԻՆ ԿՐԿԻՆ ԵՐԳՈՒՄ Է



առույն պատուիրել էր, որ առաւօտեան վաղ արթնացնեն իրեն. նա ուզում էր այժարածին անձամբ տեսնել ու հետը խօսել: Նախընթաց երեկոյեան նա երկար խօ-

սակցութիւն ունեցաւ պանդոկապետի հետ եւ գոհ դուրս եկաւ նրա սենեակից:

Երբ առաւօտեան այժարածն իր հօտի հետ միասին մօտեցաւ ջերմկատանը, Պառլան արդէն կանգնած էր տան առաջն ու կանչեց.



«Մօնի, դեռ էլի՞ չես կարող երգել»:

Նա գլուխը շարժեց. «ո՛չ, չեմ կարող, այժմ ես միշտ իմ Մէգէրլիի մասին պէտք է մտածեմ, քանի որ ինձ հետ է. ես մինչեւ մահս էլ չեմ երգի. ահա՛ խաչը»: Այդ ասելով նա մի փոքրիկ կապոց տուեց Պաուլային, որովհետեւ մեծ մայրը հոգացողութեամբ երեք-չորս թղթի մէջ էր փաթաթել խաչը:

Պաուլան խաչը հանեց փաթեթից ու սկսեց դիտել. ճիշտ որ իր կորցրած խաչն էր՝ փայլուն ակներով եւ անվնաս:

«Մօնի», ասաց նա սիրալի կերպով, «դու ինձ մեծ ուրախութիւն պատճառեցիր, որովհետեւ առանց քո օգնութեան ես երբէք լետ չէի ստանալ իմ խաչը. ես էլ ուզում եմ քեզ ուրախացնել. գնա՛, ախոռից հանիր Մէգէրլիին, նա այժմ քոնն է»:

Մօնին զարմացած աչքերը չուց օրինորդի վրայ, կարծես թէ անկարելի էր համարում իր ականջներին հաւատալը և կակազելով ասաց.

«Բայց ի՛նչպէս, ի՛նչպէս կարող է Մէգէրլին իմը լինել»:

«Ինչպէ՛ս», կրկնեց Պաուլան ժպտալով, «տես, երէկ երեկոյեան ես նրան գնեցի պանդոկապետից և այսօր առաւօտը քեզ եմ ըն-

ծայում: Այժմ կարո՞ղ ես նորից երգել»:

«Այդ լսելուն պէս Մօնին խելագարի նրման վազեց դէպի ախոռը, հանեց այդտեղից ուլը և ձեռքերի վրայ առաւ. յետոյ թռչկոտալով լետ եկաւ, — ձեռքը մեկնեց դէպ օրիորդը և մի քանի անգամ ասաց.

«Շատ և շատ շնորհակալ եմ, Աստուած փոխարէնը հատուցանէ ձեզ. երանի թէ ես էլ կարողանայի մի ծառայութիւն անել ձեզ»:

«Այդպէս, այժմ սկսիր քո երգը, տեսնենք էլի ձայն ունե՞ս թէ ոչ». ասաց Պաուլան:

Մօնին հնչեցրեց իր երգն ու այծերի հետ բարձրացաւ սարը. նրա ձայնն այնպէս բարձր հնչեց, որ ջերմկատանն ամենքն էլ լրսեցին. ոմանք էլ գլուխները շրջեցին բարձի վրայ ու ասացին.

«Այժմարձն այսօր լաւ է տրամադրուած. երևի լաւ եղանակ է»: Բայց ամենքն էլ ուրախացան՝ նորից լսելով նրա ձայնը, որովհետեւ ամենքն էլ սովորել էին այդ ուրախ արթնացնողին: Երբ Մօնին առաջին բարձրավանդակից ցած նայեց և տեսաւ, որ Պաուլան դեռ ևս կանգնած է տան առաջը, բաւականին առաջ եկաւ և որքան կարող էր բարձր ձայնով երգեց:



Այդ ամբողջ օրը Մօնին ուրախութիւնից շարունակ երգում էր. այծերն էլ կարծես վարակուելով նրանից՝ շարունակ այս ու այն կողմն էին թռչկոտում. կարծես թէ տօն էր կատարուում սարի վրայ: Արևն էլ կապուտակ երկնքից շատ ուրախ էր երևում, խոտերը հօ այդքան անձրևներից լետոյ բոլորն էլ թարմացել էին. կարմիր ու դեղին ծաղիկներն էլ այնպէս էին փայլում, որ Մօնիին թւում էր թէ երբէք այդ սարն ու հովիտն և առհասարակ ամբողջ աշխարհն այդպէս սիրուն չէ եղել: Ամբողջ օրը նա իր ուլը ձեռքից բաց չթողեց. ամենալաւ խոտերը ջոկում, նրան էր ուտեցնում ու շարունակ կրկնում.

«Մէգէրլի, սիրունիկս, դու էլ չպէտք է մեռնես, դու իմն ես այժմ և քանի որ երկուսս էլ կենդանի ենք, միշտ ինձ հետ կ'գաս արածելու»: Երեկոյեան Մօնին սարից ցած իջաւ կրկին ուրախ հնչեցնելով իր երգը և սև այծը տեղաւորելով ջերմկատան ախոռում՝ ուլը ձեռքն առաւ ու հետը տարաւ տուն: Մէգէրլին էլ բոլորովին չէր ավսոսում, որ բաժանում է իր մօրից, որովհետև Մօնիի ձեռքին ամենից ապահով էր գտնում իրեն և արդէն վաղուց Մօնին նրա հետ աւելի քրնք-

շաբար ու սիրով էր վարուել, քան նոյն իսկ մայրը:

Երբ Մօնին ուլն ուսերին շալակած իրենց տուն մտաւ՝ հեռուից աղաղակելով. «իմն է, մեծ մայր, իմն է». մեծ մայրն ոչինչ չ'հասկացաւ. բայց Մօնին էլ աւելի բան չկարողացաւ պատմել. նա առաջ վագեց դէպ ախոռը և թխահերի կողքին կակուղ ու սիրուն անկողին պատրաստեց Մէգէրլիի համար՝ թարմ խոտերից, ուլը վրան պառկեցրեց ու ասաց. «Այսպէս, Մէգէրլի, այժմ լաւ քնիր նոր բնակարանումդ. այսուհետև ամեն օր քեզ համար թարմ ու նոր անկողին կ'պատրաստեմ»:

Յետոյ Մօնին վերադարձաւ զարմացած մեծ մօր մօտ և ընթրելիս պատմեց բոլոր անցածը սկզբից մինչև վերջը՝ իր երեք օրուայ տխրութիւնը և այսօրուայ երջանկութիւնը: Մեծ մայրը լսեց այդ բոլորը լուռ և ուշադրութեամբ ու երբ Մօնին վերջացրեց, նա լրջօրէն ասաց.

«Մօնի, քեզ հետ պատահած այս դէպքը մինչև մահդ չ'մոռանաս. երբ դու ծանր հոգսերի մէջ էիր անարդար ճանապարհով ուլի կեանքն ազատելու, Աստուած արդէն առաջուց միջոց էր գտել ուլին օգնելու և քեզ ուրախացնելու համար. եթէ դու հէնց սկզբ-



բից արդար վարուէիր և Աստծուն ապաւինէիր, հէնց սկզբից էլ ամեն բան լաւ կերթար. այժմ Աստուած քեզ այնպիսի վարձատրուիլն տուեց, որ ցմահ չպէտք է մոռանաս»:

«Ո՛չ, երբէք չեմ մոռանայ, ասաց Մօնին եռանդով, «և միշտ պէտք է մտածեմ. պէտք է անեմ այն, ինչ որ Աստուծոյ առաջ արդար է, մնացածն արդէն ինքը կրկարգադրէ»:

Մօնին քնելուց առաջ մի անգամ էլ գրնաց ախոռը ուլին նայելու և համոզուելու համար թէ՛ իրաւ է, որ Մէգէրլին իրեն է պատկանում և իրենց ախոռումն է պառկած:

Եօրգլին, խոստման համաձայն, ստացաւ իր տասը Ֆրանկը, բայց արժան չնստեց նրան՝ այդ:

Երբ Եօրգլին այդ դէպքից յետոյ ջերմրկատուն եկաւ, պանդոկապետը բռնեց նրա օձիգից, ուժգին թափահարեց ու սոսց սպառնալով. «Եօրգլի, Եօրգլի, երկրորդ անգամ չբփորձես ամբողջ տունս անուանարկելու. եթէ մի անգամ էլ այդպիսի բան պատահի, այնպէս կ'երթաս այստեղից, որ քեզ էլ չի դուր գայ. տես, այնտեղ, վերևը մի ամբողջ կապոց ուռի ճիպոտներ կան այդպիսի դէպքերի հա-

մար. գնա՛ և մտածիր այդ մասին»:

Բայց մի ուրիշ հետեանք էլ ունեցաւ այդ դէպքը Եօրգլիի համար. այնուհետեւ երբ ջերմկատանը մի որ եւ է բան էր կորչում, իսկոյն բոլոր ծառայողներն ասում էին «Կիւրլիսցի Եօրգլին կլինի վերցրած». եւ երբ վերջինս գալիս էր, ամենքն էլ նրա վրայ էին թափուում ու աղաղակում. «տո՛ւր Եօրգլի, տո՛ւր» եւ ինչքան էլ նա հաւատացնում էր՝ թէ ինքը ոչինչ չունի եւ ոչինչ չի տեսել, էլի ամենքն ասում էին. «քեզ ճանաչում ենք արդէն, մեզ էլ չես կարող խաբել»:

Այսպէս Եօրգլին շարունակ սպառնալի յարձակումների էր ենթարկուում եւ համարեա՛ մի հանգիստ ըուպէ չունէր, որովհետեւ երբ տեսնում էր որ մէկը դէպ իրեն է գալիս, կարծում էր թէ նա գալիս է իրեն հարցնելու. «արդեօք այս կամ այն բանը չես գտել»: Եօրգլին միշտ կրկնում էր. «երանի՛ թէ այն խաչն իսկոյն յետ տայի. կեանքումս էլ ուրիշի իրն ինձ մօտ չեմ պահի»:

Իսկ Մօնին ամբողջ ամառն երգում էր. աշխարհումս ոչ մի մարդ իրեն այնպէս երջանիկ չէր զգում, ինչպէս Մօնին սարերի վրայ, իր այծերի հետ: Բայց յաճախ ժայռաբեմի վրայ զուարթ տարածուած միջոցին լիշում



էր թէ ինչպէս այն ժամանակ ծանր սրտով նստած էր անձրևաժայռի տակ՝ ամեն ուրախութիւնից զրկուած և ամեն անգամ ասում էր.

«Ես արդէն գիտեմ՝ թէ ինչպէս պէտք է անեմ, որ այլ ևս այնպէս չլինի. ես այլ ևս այնպիսի բան չեմ անի, որ միևնոյն ժամանակ չկարողանամ ուրախ սրտով երկնքին նայել, որովհետև Աստուած այդպէս է կամենում»:

Բայց երբ Մօնին խորը մտածմունքի մէջ էր ընկնում, այժերից մէկը կամ միւսը գալիս էր, զարմանքով նայում և մկկալով աշխատում էր վերկացնել նրան. երբեմն Մօնին չէր լքում նրանց, բայց երբ գալիս էր Մէգէրլին ու մկկալով քսմսւում նրան, իսկոյն լսում ու տեղից վեր էր թռչում:

Մօնիի ամենասիրելի ու թանկագին հարստութիւնը Մէգէրլին էր:



17. Ռօւնդօն (հրատ. Թիֆլիսի տպագր. ընկեր- ւոյն) 1881 . . . . .	— 60
18. Չէսակ անի ժողանգը, պատկ. 1892 . . . . .	1 —
19. Ակտէա, Սիսօեփայի 1885 . . . . .	— 50
20. Եան Էրնսա Վմօլեար Ե. Եան շուկի 1885 . . . . .	— 20
21. Արծուի մտաւորները, պրոֆ. Մ. Բողդա- նովի 1892 . . . . .	— 05
22. Գիւղի սուրբը. Սէատօպոլի Չէխի, 1892 . . . . .	— 10
23. Կեանքի դպրոցը, Դակէնսի 1893 . . . . .	1 —

Գ.

Հրատարակութիւնները.

1. Իս. Յարութիւնեան. Հայոց Գոր 1893 . . . . .	1 50
2. Իշխ. Կ. Բեհբութեան. Ծօնի Ի93 . . . . .	— 15
3. Ռանգարէ. Իմաէ. վէպ. թարգման. թիւ Յ. Լալայեանց 1893 . . . . .	— 25
4. Ալբեր Այնօ՝ Քուրդի լեառն. թարգ. 1894 . . . . .	— 25
5. Ճաղարբէգեան Յ. Հայոց լեզու. ա. տ. դա- սագիրք Հայ. ծի. դպր. համար 1894 . . . . .	— 30
6. Ե. Սպիրի. Այծարած Մօնի 1895 . . . . .	— 15

Դ.

Միզ մօտ և ամբողջ պատկերաւ նկատուող  
գրքերի.

1. Իսաւր լսնչիկ, պատմական վէպիկ. Քամայեանց Մ. 1894 . . . . .	— 25
2. Ֆերիզագէի երգը, Փոքր Ասիայի կեանքից, թարգմ. Յ. Լալայեանց 1894 . . . . .	— 25
3. Ղարիւ Մշեցի, պատկեր սաճկահայերի ներ- կայ կեանքից 1894 . . . . .	— 10
4. Հուքայէյ. Տարերը բնական գիտութեանց. թարգմ. Իս. Յարութիւնեանց 1894 օ- ժանդակ ձեռնարկ հայ դպր. համար . . . . .	— 40
5. Ճաղարբէգեան Յ. վահան Մամիկոնեան 1894 . . . . .	— 40



Կենդրոնական գրախանառանցքում ծախսում են

## ԻՍԱՀԱԿ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆՑԻ

Հետևելի աշխատութիւնները.

- 1) ՀԱՅՈՑ ԳԻՐԸ, բաղկացած 400 երեսից և 8 զիմատիպ նկարներով, պսակուած է Սա-հակ-Մեսրոպեան մրցանակով, գինն է 1ր. 50 կ.
- 2) ԳԵՐՄԱՆԻԱՅԻ մանկավարժական բարձրագոյն հաստատութիւնների գործունէութիւնը և հայ ուսանողները, գինն է 40 կոպ.:
- 3) ՆԵՐՍԻՍԵԱՆ ԴՊՐԱՆՈՑԻ սաների առաջին դպրոցական ճանապարհորդութիւնը, յաւելուածով, գինն է 40 կոպ.:
- 4) ՀՈՒՔՍԼԷՅ, Տարերբ բնական գիտութեանց, թարգմ. գերմաներէնից, գ. 40 կ.
- 5) ՎԱՐԴ ԲԵՍԼԻՆ (Ե. Սպիրի) թարգ. գերմաներէնից, գինն է 10 կոպ.
- 6) ՈՒՌԵՆՑ ՅՈՎՍԷՓ (Ե. Սպիրի) թարգ. գերմաներէնից, գինն է 15 կոպ.
7. ԱՅԾԱՐԱԾ ՄՕՆԻ. (Ե. Սպիրի)

**ԳԻՆՆ Է 15 ԿՐԳԵԿ**

Մասնուէի տակ են

- 1) Ներօրիսեան դպրոցի սաների նրկրորդ դպրոցական ճանապարհորդութիւնը, յաւելուածով.
- 2) Դասագիրք տրամաբանութեան.



1522

1523

ՀՀ Ազգային գրադարան



NL1695547

ՀՀ Ազգային գրադարան



NL1695546



